ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱԲԳԱՐ ՌՈՒԲԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2008

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

БИБЛИОГРАФИЯ
ПЕЧАТНЫХ ТРУДОВ АКАДЕМИКА
АБГАРА РУБЕНОВИЧА ИОАННИСЯНА

Вступительная статья В. А. Погосяна
Библиография составлена В. А. Погосяном
Редактор - библиограф М. В. Саркисян

ЕРЕВАН 2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԱԲԳԱՐ ՌՈՒԲԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

A 93998
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԳՐԱԴԱՐԱՆ

Ներածականը՝ Վ. Ա. Պողոսյանի
Մատենագիտությունը կազմել է Վ. Ա. Պողոսյանը
Խմբագիր - մատենագետ՝ Մ. Վ. Սարգսյան

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
44

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
44

ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 01 : 941 (479. 25)
ԳՄԴ 91. 9 : 63 + 63. 3 (2Հ)
Հ 854

Հ 854 Ակադեմիկոս Աբգար Ռուբենի Հովհաննիսյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., 2008. – 35 էջ:

Գրքույկն ամփոփում է հայրենական անվանի պատմաբան ակադեմիկոս Աբգար Ռուբենի Հովհաննիսյանի (1908-1991թթ.) տպագիր աշխատությունների ցանկը: Բացի դրանից, զետեղված են Ա. Հովհաննիսյանի՝ իբրև պատմաբանի դիմագիծն ուրվագծող հոդված, ինչպես նաև տեղեկություններ նրա կյանքի և գիտական գործունեության մասին: Լույս է ընծայվում՝ նրա ծննդյան 100-ամյակի կապակցությամբ:

Նախատեսված է պատմաբանների համար:

ԳՄԴ 91. 9 : 63 + 63. 3 (2Հ)

ISBN 978-99941-73-26-6

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱԲԳԱՐ ՌՈՒԲԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ // ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Աբգար Ռուբենի Հովհաննիսյանը ծնվել է Թիֆլիսում 1908 թ. մայիսի 30-ին:

1924-1928 թթ. ԵՊՀ պատմագրական ֆակուլտետի ուսանող:

1925-1928 թթ. թարգմանիչ՝ Անդրկովկասի հեռագրային գործակալությունում:

1928-1931 թթ. ԵՊՀ ասպիրանտ:

1931-1960 թթ. դասավանդել է ԵՊՀ-ում:

1935 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1938 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1938-1947 թթ. ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր:

1938-1960 թթ. ԵՊՀ Նոր դարի պատմության ամբիոնի վարիչ:

1939-1947 թթ. Երևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի անդամ:

1940 թ. շնորհվել է ՀԽՍՀ Գիտության վաստակավոր գործչի կոչում:

1945 թ. պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

1947 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

1947-1953 թթ. ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի տնօրեն:

1949-1960 թթ. ՀԽՍՀ ԳԱ Հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս- քարտուղար:

1955 թ. պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով:

1958 թ. մասնակցել է ԽՍՀՄ և Ֆրանսիայի պատմաբանների 1-ին կոնֆերանսին Փարիզում:

1960 թ. մասնակցել է պատմաբանների 11-րդ միջազգային վեհաժողովին Ստոկհոլմում:

1960-1963 թթ. ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ:

1961 թ. մասնակցել է ԽՍՀՄ և Ֆրանսիայի պատմաբանների 2-րդ կոնֆերանսին Մոսկվայում:

1961 թ. պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով: /Երկրորդ անգամ/:

1963-1967 թթ. ՀԽՍՀ ԳԱ գիտական կադրերի գծով խորհրդի նախագահ:

1965-1967 թթ. ՀԽՍՀ ԳԱ Գիտահրատարակչական խորհրդի նախագահ:

1966 թ. մասնակցել է ԽՍՀՄ և Ֆրանսիայի պատմաբանների 3-րդ կոնֆերանսին Փարիզում:

1967-1986 թթ. ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ:
1968 թ. պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով: /Երկրորդ անգամ/:
1969 թ. մասնակցել է ԽՍՀՄ և Ֆրանսիայի պատմաբանների 4-րդ կոնֆերանսին Երևանում:
1970 թ. մասնակցել է պատմաբանների 13-րդ միջազգային վեհաժողովին Մոսկվայում:
1971 թ. մասնակցել է Փարիզի Կոմունայի 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին Փարիզում:
1971 թ. մասնակցել է ԽՍՀՄ և Ֆրանսիայի պատմաբանների 5-րդ կոնֆերանսին Տուլուզում:
1973 թ. մասնակցել է ԽՍՀՄ և Ֆրանսիայի պատմաբանների 6-րդ կոնֆերանսին Մոսկվայում:
1974 թ. «Կոմունիստական գաղափարները Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին» մենագրության համար արժանացել է ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վ.Պ. Վոլգինի անվան մրցանակի:
1976 թ. գլխավորել է խորհրդային պատմաբանների պատվիրակությունը ԽՍՀՄ և Ֆրանսիայի պատմաբանների 7-րդ կոնֆերանսում՝ Փարիզում և Դիժոնում:
1976 թ. պարգևատրվել է «Հոկտեմբերյան հեղափոխության» շքանշանով:
1978 թ. մասնակցել է ԽՍՀՄ և Ֆրանսիայի պատմաբանների 8-րդ կոնֆերանսին Մոսկվայում:
1986-1990 թթ. ՀՀ ԳԱ նախագահության անդամ:
1988 թ. պարգևատրվել է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով:
1989 թ. մասնակցել է 18-րդ դարի Ֆրանսիական հեղափոխության 200-ամյակին նվիրված՝ «Ֆրանսիական հեղափոխության պատկերը» միջազգային գիտաժողովին Փարիզում:
1990-1991 թթ. ՀՀ ԳԱ նախագահության խորհրդական:
1991 թ. դեկտեմբերի 3-ին վախճանվել է Մոսկվայում:

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Խորհրդային պատմաբանների ավանդը Ֆրանսիայի պատմության ուսումնասիրության ասպարեզում գերագնահատելու հարկն ամենևին չկա: Խորհրդային պատմագրությունն ի սկզբանե դրսևորել է անքաքույց հետաքրքրություն, մասնավորապես Ֆրանսիայի նոր դարի պատմության նկատմամբ և իր անգնահատելի ավանդը ներդրել XVIII-XIX դարերի ֆրանսիական հեղափոխությունների, սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման և հասարակական մտքի պատմության առանցքային հիմնախնդիրների քննական վերլուծության բնագավառներում: Այն առաջադրել է մեծ թվով աշխարհահռչակ պատմաբանների փայլուն մի աստղաբույլ, որի ներդրումը Ֆրանսիայի պատմության ուսումնասիրության ասպարեզում բարձր գնահատականի է արժանացել միջազգային պատմագիտական շրջանակներում:

Ակադեմիկոսներ Նիկոլայ Լուկինը (1885-1940) և Վյաչեսլավ Վոլգինը (1879-1962) 1920-ական թվականներից ի վեր ծեռնամուխ են եղել խորհրդային պատմաբանների առաջին սերնդի կրթությանը՝ դառնալով մարքսիստական պատմագիտական դպրոցի հիմնադիրները, որի ներկայացուցիչներից շատերը հետագայում դարձան «ռուսական դպրոցի» գործի ջահակիրը և նվաճեցին պատմագիտական Օլիմպոսի բարձունքները: 1960-1970-ական թվականներին միջազգային լայն ճանաչման էին արժանացել Ֆրանսիայի պատմության ուսումնասիրության ասպարեզում մեծ լումա ունեցող այնպիսի հեղինակավոր պատմաբաններ, ինչպիսիք են Ալբերտ Մանֆրեդը, Բորիս Պորշնևը, Վիկտոր Դալինը, Ֆյոդոր Պոտյոմկինը, որոնցից շատերի հիմնարար աշխատությունները պարբերաբար թարգմանվել են տարբեր լեզուներով՝ ապահովելով նրանց համար պատվավոր տեղ համաշխարհային պատմագիտության քառուղիներում: Նրանց թվում էր նաև ակադեմիկոս Վոլգինի սան, ականավոր պատմաբան Աբգար Հովհաննիսյանը:

Խորհրդային և հայրենական պատմագիտության միջօրեականներում խոր հետք թողած ակադեմիկոս Աբգար Ռուբենի Հովհաննիսյանի (1908-1991) անունը քաջ հայտնի է մեր հանրապետության գիտական շրջանակներից դուրս: Նա ծնվել է 1908 թ. մայիսի 30-ին Թիֆլիսում, իրավաբանի ընտանիքում: Նրա պապը՝ Աբգար Հարությունի Հովհաննիսյանը (1849-1904) եղել է անվանի հրապարակախոս, լրագրող և հասարակական գործիչ, գլխավորել ազգային-պահպանողական հոսանքը XIX դ. վերջին քառորդում, 1876-1881 թթ. և 1882-1898

թթ. խմբագրել համապատասխանաբար՝ «Փորձ» և «Արձագանք» պարբերականները[1]:

Գիտական մկրտությունը ստանալով 1920-1930-ական թվականներին՝ Ա. Հովհաննիսյանն ավելի քան կես դար անմնացորդ ծառայել է Կլիոյի դիցուհուն և խորհրդային պատմագրության անդաստանը հարստացրել ոչ միայն XVIII-XIX դարերի ֆրանսիական հասարակական մտքի, այլև XVIII դարում հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմության առանցքային հիմնահարցերին նվիրված մեծարժեք գիտական աշխատություններով, որոնք նրա անունը փառքով են պսակել խորհրդային և համաշխարհային պատմագրության երկնակամարում: Չափազանցրած չենք լինի, եթե հավաստենք, որ հայ ժողովրդի նոր դարի պատմության ուսումնասիրության ասպարեզում նա ոչ միայն Լեոյի, ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանի և Մկրտիչ Ներսիսյանի հետ մեկտեղ XX դարի հայրենական պատմագրության չորս գագաթներից էր, այլև խորհրդային պատմագրության սյուներից:

XVIII-XIX դարերի ֆրանսիական ուտոպիական կոմունիզմի և սոցիալիզմի պատմությանը նվիրված Ա. Հովհաննիսյանի ուսումնասիրությունները բարձր են գնահատել թե՛ խորհրդային և թե՛ արտասահմանյան պատմաբանները, որոնք պարբերաբար դրանք արժևորել են պատմագիտական տարբեր հեղինակավոր պարբերականներում տպագրած գրախոսություններում և ֆրանսիական հասարակական մտքի պատմության ուսումնասիրության վերլուծությանը նվիրված աշխատություններում[2]: Պատմաբանի լավագույն՝ «Կոմունիստական գաղափարները Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին» մենագրությունը[3], 1974 թ. արժանացել է նրա ուսուցչի՝ ակադեմիկոս Վոլգինի անվան ԽՍՀՄ ԳԱ սահմանած մրցանակին: Երկար տարիներ Ա. Հովհաննիսյանը միջազգային գիտաժողովներում ներկայացրել է խորհրդային պատմագիտությունը, նաև գլխավորել խորհրդային պատմաբանների պատվիրակությունները:

---

[1] Այդ մասին տե՛ս Մ.Հ. Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Երևան, 1976:

[2] Տե՛ս օրինակ В.А. Дунаевский, Б.Ф. Поршнев, Изучение западноевропейского утопического социализма в советской историографии (1917-1963) // История социалистических учений. Памяти академика В.П. Волгина, М., 1964, с. 34, 42-44, 55-56, 59; В.М. Далин, Историки Франции XIX-XX веков, М., 1981, с. 159-160, 280; В.А. Дунаевский, Г.С. Кучеренко, Западноевропейский утопический социализм в работах советских историков, М., 1981, с. 49-50, 58-61, 73-74, 77-78, 122-127. Նշենք, որ Ա. Հովհաննիսյանի արխիվում պահպանվել են ակադեմիկոսներ Ե. Տարլեի, Վ. Վոլգինի, Ն. Դրուժինինի, պրոֆեսորներ Ա. Մանֆրեդի, Վ. Դալինի և այլոց խիստ դրական, առ այսօր չհրապարակված, կարծիքները նրա տարբեր գրքերի կամ գրքերի ձեռագրերի մասին: Տե՛ս Հայաստանի հանրապետության Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԱ), ֆ. 1169 (Ա. Ռ. Հովհաննիսյանի), ց. 1, գ. 250, թ. 9-9 շրջ., 28; գ. 261, թ. 1-8; գ. 265, թ. 1-5; գ. 266, թ. 1-4:

[3] А.Р. Иоаннисян, Коммунистические идеи в годы Великой французской революции, М., 1966; A. Ioannissian, Les idées communistes pendant la Révolution française, Moscou, 1984

Ա. Հովհաննիսյանի ուսումնասիրությունը և գիտական դաստիարակությունը համընկել են ԽՍՀՄ-ում մարքսիստական պատմական գիտության ձևավորման բարդ ժամանակաշրջանին: Պատմագիտական մտքի զարգացման այս նոր փուլը՝ նորաստեղծ խորհրդային պետության պատմաբաններին առաջադրում էր միանգամայն նոր պահանջներ: Մենք հակված չենք հավաստելու, թե 1920-1930-ական թվականներին մարքսիստական պատմական գիտության կայացումը հանգեցրել է միանշանակորեն դրական արդյունքների: Խորհրդային պատմագիտական մարքսիստական դպրոցի ինքնահաստատման գործընթացը ոչ միայն ճանապարհ է հարթել խիստ կարևոր կտրվածքով՝ սոցիալ-տնտեսական հարաբերությունների հենքի վրա պատմական անցյալի խորը ուսումնասիրության համար, այլև միաժամանակ մեծապես խոչընդոտել է պատմագիտական մտքի անկաշկանդ զարգացմանը, քանզի դրա՝ մարքսիստական մեթոդոլոգիայի միահեծան տիրապետության հաստատման գերնպատակ հետապնդող առաջընթացն ուղեկցվել է անհարկի քաղաքականացված ծայրահեղություններով: Այս պայմաններում, մարքսիստ պատմաբանների առաջին սերնդի ներկայացուցիչները ոչ միայն նսեմացնում էին պատմագիտական ոչ մարքսիստական ուղղությունների դերն ու նշանակությունը, այլև երիտասարդական ավյունով, հանիրավի, անողոք պայքար մղում մարքսիզմն իբրև մարդկային հասարակության պատմության մեկնաբանության միակ հնարավոր մեթոդոլոգիա անվերապահորեն չընդունող թե՛ ռուսական պատմագիտության կարկառուն ներկայացուցիչների (Նիկոլայ Կարեև, Եվգենի Տարլե և այլք), և թե՛ ֆրանսիացի հեղինակավոր պատմաբանների (մասնավորապես, Ալբեր Մատյեզ) դեմ՝ չխորշելով անգամ նրանց վրա ոչնչով չհիմնավորված քաղաքական մեղադրանքներ բարդելուց[4]:

Այսպիսով, անջրպետելով խորհրդային պատմական գիտությունը համաշխարհային պատմագիտական դաշտում տեղի ունեցող բոլոր շահեկան տեղաշարժերից և XX դարում պատմագիտական ոչ մարքսիստական մտքի աննախադեպ առաջընթացից, ինչն, անտարակույս, մեթոդոլոգիական նոր մոտեցման առավելությունների շարքում չի կարելի դասել, մարքսիստական խորհրդային գիտությունը դեռևս իր խոյացման արշալույսին նախանշել է այն հիմնական ոլորտները, որոնց վրա հարկ էր գամել խորհրդային պատմաբանների ուշադրությունը: Դրանք հանգում էին սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման, հասարակության՝ գլխավորապես ծախ ուժերի գործունեության կտրվածքով քաղաքական պատմության և նրանց գաղափարախոսության ուսումնասիրությանը, ինչը պայմանավորված էր մարքսիզմի հիմնական

---

[4] Տե՛ս օրինակ Г. Зайдель, М. Цвибак, Классовый враг на историческом фронте, М.; Л., 1931; Полемика Альбера Матьеза с советскими историками. 1930-1931 гг. Предисловие В.А. Дунаевского // Новая и новейшая история, 1995, N 4, с. 199-211.

առանցքային հայեցակարգային դրույթներից մեկով՝ դասակարգային պայքարի տեսությամբ, ըստ որի՝ պատմության շարժիչ ուժը ժողովրդական զանգվածներն են:

Պատմաբանն, անտարակույս, իր ժամանակի ներկայացուցիչն է: Ա. Հովհաննիսյանը չէր կարող բացառություն կազմել: Նրա գիտական գործունեությանը բնորոշ են նոր ծնունդ առած մարքսիստական խորհրդային գիտության առանձնահատկություններից շատերը: Նախ՝ ինչպես և իր սերնդակիցները, 1920-ական թվականներին իբրև գիտական ուսումնասիրությունների հիմնական ոլորտ նա ընտրել է խորհրդային պատմաբանի համար հնարավոր ուղղություններից մեկը, այն է՝ ֆրանսիական ուտոպիական կոմունիզմի պատմությունը, որի նկատմամբ նրա հետաքրքրությունը, ըստ իր իսկ հավաստման, ծագել է դեռևս ուսանողական տարիներին, երբ ՀՍԽՀ հանրային գրադարանում (այսօր՝ ՀՀ Ազգային գրադարան) պահվող Վասիլ (Բարսեղ) Ղորղանյանի (Կորգանովի) անձնական ֆոնդում ծանոթացել է XVIII դարի ֆրանսիացի ուտոպիստ կոմունիստների երկերին[5]:

1930-ական թվականներին Ա. Հովհաննիսյանի մուտքը պատմական գիտության ասպարեզ նշանավորող առաջին գիտական աշխատությունները, որոնք դարձել են նրա ատենախոսությունների (համապատասխանաբար՝ 1935 թ. ԽՍՀՄ ԳԱ-ում և 1938 թ. Մոսկվայի պետական համալսարանում պաշտպանված) հենքը, նվիրված են եղել XVIII-XIX դարերի ֆրանսիացի նշանավոր ուտոպիստ կոմունիստներ Ռետիֆ դը լա Բրետոնի և Շառլ Ֆուրյեի հայացքների ուսումնասիրությանը[6]: Դրանք հիմնվում էին բացառապես տպագիր սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության վրա, ինչը միանգամայն համահունչ էր նոր ձևավորվող խորհրդային պատմական գիտության զարգացման ընդհանուր համայնապատկերին:

Խորհրդային երիտասարդ պատմաբանները, խիստ ոգևորված բացառապես մարքսիստական մեթոդոլոգիայի հիման վրա պատմության մեկնաբանության անհրաժեշտությամբ, որը նրանց համոզմամբ ապահովում էր իրենց անառարկելի գերազանցությունն արևմտյան ոչ մարքսիստական պատմագիտական ուղղությունների ներկայացուցիչների նկատմամբ, հավուր պատշաճի ուշադրություն չէին դարձնում արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության վրա: Նույնիսկ այն սակավաթիվ պատմաբանները, որոնց 1920-ական թվականներին

---

[5] Ռետիֆ դը լա Բրետոնին նվիրված առաջին ուսումնասիրության առնչությամբ նա, ի դեպ, նշել է. «Այս հոդվածը գրված է 1928-29 տարվա ձմռանը Հ. Ս. Խ. Հ. հանրային գրադարանում եղած նյութերի հիման վրա»: Ա. Հովհաննիսյան, Ռետիֆ դը լա Բրետոնը և նրա ուտոպիան, Հ. Ս. Խ. Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 1930, թիվ 6, էջ 278:

[6] Տե՛ս օրինակ А.Р. Иоаннисян, Ретиф-де-ла Бретон // Ретиф-де-ла Бретон, Южное открытие, произведенное летающим человеком, или французский Дедал, М.-Л., 1936, с. V-LVIII, *նույնի՝* Генезис общественного идеала Фурье, М.-Л., 1939.

հնարավորություն էր ընձեռվել գիտական գործուղումների մեկնելու արտասահմանյան երկրներ, սահմանափակվում էին գլխավորապես տպագիր սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ[7]: Ակնհայտ է, որ խոսքը տվյալ պարագայում վերաբերում է պատմագիտության ասպարեզ մուտք գործած մի ամբողջ սերնդի հոգեբանությանը:

Ամեն դեպքում, գիտական բարձր մակարդակ ունեցող առաջին իսկ աշխատությունների շնորհիվ Ա. Հովհաննիսյանը կարճ ժամանակամիջոցում իրավամբ ծեռք է բերել հասուն և կայացած պատմաբանի համբավ[8]: Այդ մասին է վկայում 1941 թ. ԽՍՀՄ ԳԱ Պատմության ինստիտուտի Նոր և նորագույն պատմության բաժնի ղեկավարներից Ֆ. Պոտյոմկինի՝ նրան ԽՍՀՄ ԳԱ համակարգում մշտական աշխատանքի հրավիրելուն առնչվող առաջարկությունը, որը միտված էր ինստիտուտի աշխատանքների մակարդակի բարձրացմանը[9]:

Փոխարենը, 1940-1950-ական թվականներին, Ա. Հովհաննիսյանի՝ XVIII դ. հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմությանը նվիրված գրքերը խարսխվում էին խորհրդային արխիվներում պահվող վավերագրերի մանրակրկիտ ուսումնասիրության վրա[10]: Ըստ էության, չունենալով նախորդներ, նա առաջինն է հավուր պատշաճի արժևորել Հովսեփ Էմինի գործունեությունը[11] և Ռուսաստանի՝ 1780-ական թվականներին հայկական ազատագրական շարժման հանդեպ ունեցած դիրքորոշումը: Նշենք, որ Ա. Հովհաննիսյանի արխիվում պահպանվել է ակադեմիկոս Տարլեի՝ նրա «Ռուսաստանը և հայկական ազատագրական շարժումը XVIII դարի 80-ական թվականներին» մենագրությանը տված հիշարժան գնահատականը: Այս գրքի առնչությամբ նրան հղած՝ 1946 թ. դեկտեմբերի 18-ի թվակիր հակիրճ նամակում Ե. Տարլեն գրել է. «Հենց նոր ստացա «Ռուսաստանը և հայկական ազատագրական շարժումը XVIII դարի 80-ական թվականներին» ձեր աշխատանքը: Արդեն հպանցիկ իսկ ծանոթու-

---

[7] Տե՛ս օրինակ В.М. Далин, Из истории социальной мысли во Франции, М., 1984, с. 6-8.

[8] Երևանի համալսարանի ղեկավարությանը հղած՝ 1931 թ. փետրվարի 10-ի թվակիր նամակում ակադեմիկոս Վոլգինը գրել է. «Ընկ. Աբգար Հովհաննիսյանն իմ ղեկավարությամբ աշխատանքներ է իրականացնում XVIII դ. ֆրանսիական սոցիալիզմի ուսումնասիրության ասպարեզում: Գտնում եմ, որ այդ աշխատանքն ունի մեծ նշանակություն գիտական կոմունիզմի նախորդներին հայտնաբերելու և, հետևաբար, սոցիալիստական գաղափարների զարգացման ընդհանուր հայեցակարգի մշակման համար: Այդ խնդրի իրականացման հւսմար ընկ. Հովհաննիսյանը տիրապետում է բավականաչափ գիտելիքների և ունի գիտաշխատողի արտասովոր ընդունակություններ»: Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 1169, ց. 1, գ. 251, թ. 1:

[9] А.В. Ревякин, Федор Васильевич Потемкин // Портреты историков. Время и судьбы, т. 2. Всеобщая история, М., 2000, с. 398.

[10] А.Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945; *նույնի՝* Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947; *նույնի՝* Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.

[11] Գիրքը բարձր գնահատականի է արժանացել թե՛ խորհրդային պատմաբանների կողմից և թե՛ արտերկրում: Տե՛ս Б. Заходер // Вопросы истории, 1946, N 11-12, с. 155-157; Գ. Գիւզալեան // Հայրենիք (Բոստոն), 1949, թիվ 5, էջ 103-106:

թյունը թողնում է շատ հետաքրքիր և պատկառելի հետազոտության տպավորություն: Կկարդամ այն անհապաղ. ես պետք է շուտով մի գլուխ պատրաստեմ Վ. Զուբովի արշավանքի և նրա նախորդ գործողությունների մասին»[12]:

Ուստի միանգամայն օրինաչափ է, որ հաշվի առնելով դեռևս երիտասարդ պատմաբանի արժանիքները, ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ ակադեմիկոս Վոլգինը 1947 թ. ՀԽՍՀ ԳԱ ակադեմիայի հերթական ընտրությունների կապակցությամբ առաջադրել է նրա թեկնածությունն ակադեմիկոսի տեղի համար հայտարարված մրցույթին[13], որոնց արդյունքում նա ընտրվել է ակադեմիայի անդամ:

Այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ Ե. Տարլեի կողմից դրվատված նրա գիրքը, ստալինյան վարչակարգի մայրամուտին բոլորի կողմից չի արժանացել միանշանակորեն դրական գնահատականների: Այդ մասին է վկայում Ա. Հովհաննիսյանի գրավոր ելույթներից մեկը: Մեզ անհայտ հանգամանքների բերումով, 1950 թ. նա, ինչպես և Գալիլեյը, հարկադրաբար հրաժարվել է իր գիտական հայացքներից, հանդես եկել «ինքնաքննադատական» հոդվածով և հրապարակավ «ընդունել» իր հասցեին բարդված տարբեր, իրականում ոչնչով չհիմնավորված քաղաքական «մեղադրանքներ»[14]: Ելնելով Ա. Հովհաննիսյանի հոդվածից՝ կարելի է, անտարակուսելի համարել, որ նրան մեղադրել են, մասնավորապես ադրբեջանական ժողովրդի պայքարը թուրքական և պարսկական կեղեքիչների դեմ՝ հայ և վրացի ժողովուրդների պայքարի ընդհանուր համատեքստում չընդգրկելու մեջ: Այս կարծեցյալ թերացումը նա բացատրել է, մասնավորապես բուրժուական պատմագրության ազդեցությամբ, որի հանդեպ ինքն, իբր «Ռուսաստանը և հայկական ազատագրական շարժումը XVIII դարի 80-ական թվականներին» գրքում քննադատական մոտեցում չի ցուցաբերել:

Մեր օրերի բարձունքից կարող է սոսկ զարմանք հարուցել նրա կողմից՝ իրեն հանիրավի վերագրվող մեղադրանքների ընդունման փաստը: Սակայն, հարկ է հաշվի առնել, որ հակառակ պարագայում, ստալինյան վարչակարգի ճիրաններում գտնվող պատմաբանը կարող էր արժանանալ՝ կյանքի հետագա տարիները քաղաքական բանտարկյալների համար նախատեսված ստալինյան ճամբարներում անցկացնելու՝ իր գործընկերներից շատերի (Աշոտ Հովհաննիսյան, Վ. Դալին, Յակով Զախեր և այլք) դժխեմ ճակատագրին:

Չնայած այս հանգամանքին, հաշվի առնելով հայկական ազատագրական շարժումների պատմությանը նվիրված իր գրքերի գիտական կարևորությունը, կյանքի վերջին տարիներին, հավանաբար, կապված նաև ղարաբաղյան

---

[12] Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 1169, ց. 1, գ. 250, թ. 9-9 շրջ.:
[13] Նույն տեղում, գ. 261, թ. 9-10:
[14] А.Р. Иоаннисян, По поводу моей книги "Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия" // Տեղեկագիր. հասարակական գիտություններ, 1950, թիվ 4, էջ 83-88:

շարժման ծավալման հետ, Ա. Հովհաննիսյանը նպատակահարմար գտավ դրանք վերահրատարակել[15], դրանով իսկ, փաստորեն, ինչպես և Գալիլեյը, անվավեր դարձնելով իր իսկ «ինքնաքննադատությունը», որին նա դիմել էր 1950-ական թվականներին ԽՍՀՄ-ում առկա քաղաքական բիրտ մթնոլորտի թելադրանքով:

Եթե Ա. Հովհաննիսյանի խորհրդային գործընկերների գերակշռող մասը հարկադրաբար բավարարվում էր ԽՍՀՄ-ում գտնվող արխիվների ընձեռած հնարավորություններով, ինչը և պայմանավորել է խորհրդային պատմագրության առանձնահատկություններից մեկը, ապա, ի տարբերություն նրանց՝ նա, 1960-ական թվականներից ի վեր, հնարավորություն է ստացել պարբերաբար աշխատելու ֆրանսիական արխիվներում և գրադարաններում: Գործունեության այս երկրորդ փուլում է ամբողջ խորությամբ դրսևորվել Ա. Հովհաննիսյանի պատմագիտական վառ տաղանդը: 1960-1980-ական թվականներին նա գրել է XVIII դարի վերջի և XIX դարի առաջին կեսի ֆրանսիական ուտոպիական կոմունիզմի պատմությանը նվիրված մեծարժեք աշխատությունների մի ամբողջ շարք (հինգ մենագրություն):

Գիտական գործունեության այս ժամանակահատվածում նա Ա. Հովհաննիսյանը շարունակում էր ոչ միայն իր ուշադրության կենտրոնում պահել այն ուտոպիստ կոմունիստներին[16], որոնց հայացքների ուսումնասիրությանն էին նվիրված նրա առաջին աշխատությունները, այլև օգտագործելով ֆրանսիական արխիվներում ու գրադարաններում հայտնաբերած նորահայտ փաստաթղթեր, պարբերաբար անդրադառնում էր նրանցից ոմանց (Ռետիֆ դը լա Բրետոն) գործունեության և հայացքների բարեշրջման մինչ այդ անտեսված կողմերին[17]: Այդուհանդերձ, կոմունիստական գաղափարախոսության պատմության ուսումնասիրության ասպարեզում նրա հիմնական ներդրումը հանգում էր միանգամայն նոր դեմքերի և ըստ այդմ՝ Ֆրանսիայում ուտոպիական գաղափարախոսության առանձնահատկությունների բացահայտմանն ու տարածման ուղիների հստակեցմանը[18]: Ֆրանսիական կենտրոնական և դեպարտամենտական տարբեր արխիվների և մամուլի նյութերի բծախնդիր ուսումնասիրության հիման վրա նա պատմաբանների սեփականությունն է դարձրել նրանց անհայտ՝ XVIII-XIX դարերում Ֆրանսիայում ուտոպիական կոմունիստական գաղափարախոսության մեծ թվով հետևորդների (Գ. Բորիե, Ժ.-Կ. Շապյուի, Մ. Կյուբեր, Ժ. Գրենյու, Ռ.Ֆ. Դեբոն, և այլք), որոնց անունները մատնված են եղել կամ

---

[15] А.Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1989; *նույնի՝* Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1990.
[16] А.Р. Иоаннисян, Шарль Фурье, М., 1958.
[17] А.Р. Иоаннисян, Коммунистические идеи в годы Великой французской революции, с. 178-248.
[18] Տե՛ս մանրամասն В.А. Лунаевский, Г.С. Кучеренко, նշվ. աշխ., էջ 122-127:

կատարյալ մոռացության, կամ հայտնի են եղել միայն թեականորեն: Այս առումով առավել ցայտուն օրինակը XVIII դարի Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում կոմունիստական մտքի զարգացման պատմությանը նվիրված նրա մենագրությունն է, որում ընթերցողի առջև հառնում է մինչ այդ անհայտ գործիչների մի ամբողջ համաստեղություն: Ֆրանսիական հասարակական մտքի պատմության խոշորագույն մասնագետներից մեկի՝ Վ. Դալինի համոզմամբ՝ Ա. Հովհաննիսյանի գիրքը «գյուտերի և հայտնագործությունների մի ամբողջ շղթա է»[19]:

Ձեռնպահ մնալով Ա. Հովհաննիսյանի՝ հասարակական մտքի պատմությանն առնչվող պատկառելի գիտական ժառանգության քննական վերլուծության մեջ խորամուխ լինելուց, բավարարվենք ընդհանուր բնույթի ամենաէական դիտարկումներով: Մասնավորապես, այս թեմայի պատմագրության մեջ նա առաջինն է բացահայտել կոմունիստական գաղափարախոսության հարատևությունը Ֆրանսիայում նապոլեոնյան ամբողջատիրական վարչակարգի օրոք և երկրորդ Ռեստավրացիայի տարիներին[20]: Իսկ ավելի ուշ, պատմագիտության մեջ կիրառելով միանգամայն նոր մոտեցում՝ նա նաև առաջինն է XIX դարի 40-ական թվականների ուտոպիական կոմունիստական գաղափարների զարգացումը շաղկապել հեղափոխական բանվորական շարժումների պատմությանը[21]: Դրանում է նրա վերջին աշխատությունների յուրահատկությունը:

Ա. Հովհաննիսյանը բազմիցս անդրադարձել է պատմաբանի համար խրթին՝ կենսագրական ժանրին: Նրա աշխատությունների կենտրոնում մշտապես գտնվում էին մարդիկ, ընդ որում ոչ միայն պատմության քառուղիներում խոր հետք թողած նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին Հ. Էմինը կամ Շ. Ֆուրյեն, այլև ճակատագրի հեգնանքով պատմության թատերաբեմից հեռու նետված և վաղուց ի վեր մոռացության մատնված ուտոպիական գաղափարախոսության մեծաքիվ հետևորդներ, որոնք, սակայն, նրա տքնաջան գիտական պրպտումների արդյունքում դարձել են պատմագիտական հանրության սեփականությունը: Այս հանգամանքն, ի դեպ, Ա. Հովհաննիսյանին զանազանում է միևնույն ժանրին բազմիցս անդրադարձած նրա խորհրդային գործընկերներից՝ պատմական գործիչների դիմագիծն ուրվագծող մեծ վարպետներից (Ա. Մանֆրեդ, Սերգեյ Ուտչենկո, Վլադիմիր Տրուխանովսկի, Նիկոլայ Մոլչանով և այլք), որոնց գրչին պատկանում են բացառապես նշանավոր պետական, քաղաքական և ռազմական գործիչների մեծարժեք կենսագրականներ: Միաժամանակ,

---

[19] В.М. Далин, Историки Франции XIX-XX веков, с. 159.

[20] А.Р. Иоаннисян, К истории французского утопического коммунизма первой половины XIX столетия, М., 1981.

[21] А.Р. Иоаннисян, Революционно-коммунистическое движение во Франции в 1840-1841 гг., М., 1983; *նույնի՝* Революционно-коммунистическое движение во Франции в 1842-1847 гг., М., 1986; *նույնի՝* Революция 1848 года во Франции и коммунизм, М., 1989.

հարկ է չանտեսել, որ այս ասպարեզում Ա. Հովհաննիսյանի և նրա գործընկերների միջև նկատելի է ևս մեկ զանազանություն: Այն է՝ նրա ուսումնասիրությունների հետևախորքի վրա հառնում են տարբեր պատմական ժամանակաշրջաններում և տարածաշրջաններում, միաժամանակ նաև միմյանց հետ առնչություն չունեցող ասպարեզներում, ինչպիսիք են XVIII դ. հայկական ազատագրական շարժումները, XIX դ. 40-ական թվականներին Ֆրանսիայում ծայր առած հեղափոխական պայքարը, տեսական մտորումները, իրենց գործունեությունը ծավալած գործիչներ, որոնց, այդուհանդերձ, միավորող միակ հանգամանքը եղել է պատմաբանի մեծ վարպետությունը:

Ինչպես և իր սերնդակիցների, անկախ քաղաքացիությունից և ազգային պատկանելությունից, գերակշռող մասը, Ա. Հովհաննիսյանը պրոֆեսիոնալ պատմաբան էր, որը չնայած միջազգային լայն ճանաչմանը, իր՝ իբրև պատմաբանի մասին ուներ համեստ կարծիք: XX դ. երկրորդ կեսին բարձր զարգացման մակարդակի հասած պատմական գիտության ասպարեզում պրոֆեսիոնալ պատմաբաններն ուժերը փորձարկել են կամ միայն մեկ, այդուհանդերձ, մեծ թեմայի շրջանակներում, կամ առավելագույնս սահմանափակվել երկու տարբեր թեմաների ուսումնասիրությամբ: 1920-ական թվականների խորհրդային պատմագիտական հնոցում թրծված պատմաբանների մեծ մասը որդեգրել էր երկրորդ տարբերակը, ինչը, մեր կարծիքով, ավելի նախընտրելի է: Դա պայմանավորված էր խորհրդային պատմաբանների առաջին սերնդի ներկայացուցիչների՝ Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում ստացած քառամյա ուսումնառության առանձնահատկություններով, որի ընթացքում նրանք յուրաքանչյուր տարի մասնակցել են երկու տարբեր թեմաների նվիրված սեմինարների աշխատանքներին, հանգամանք, որը և նախանշել է նրանց գիտական հետազոտությունների հետագա ուղեծրերը[22]: Ա. Հովհաննիսյանը ևս, ինչպես իր սերնդակիցները, ժամանակի ոգուն համահունչ, ընտրել է պատմագիտական երկու տարբեր ոլորտներ, որևէ ցանկություն իսկ երբևէ չդրսևորելով հատելու դրանց շրջանակները:

Նույնիսկ այս պայմաններում, նա, ինչպես և բոլոր պրոֆեսիոնալ պատմաբանները, իր մասին արտահայտվում էր բացառապես ծայրահեղ անհրաժեշտության դեպքում և խիստ զուսպ ձևով: Այսպես. պատմաբանը, որի անունը վաղուց ի վեր քաջ հայտնի էր միջազգային ասպարեզում, 1975 թ. դեկտեմբերին, անձնական զրույցում, իր մասին հայտնեց հետևյալ կարծիքը. «Իմ մասին ասում են, թե ես Ֆրանսիական հեղափոխության պատմության մասնագետ եմ: Դա այդպես չէ, եթե դուք ընթերցեք իմ գիրքը, Ֆրանսիական հեղափոխության պատմության մասին, այնտեղ ոչինչ չեք գտնի: Ես միայն գաղափարների պատ-

[22] Տե՛ս օրինակ В.М. Далин, С.С. Бантке – историк // Памяти С.С. Бантке. (Из истории революционного движения в Бессарабии), Кишинев, 1970, с. 58-59.

մության մասնագետ եմ»: Տարիներ անց, նեղ մասնագիտական շրջանակներում, Ֆրանսիայի պատմության տարբեր մասնագետներ նրա մասին հայտնում էին միևնույն կարծիքը՝ նրան ընկալելով իբրև միայն ֆրանսիական հասարակական մտքի պատմության խոշորագույն մասնագետի: Նշենք, ի դեպ, որ տարբեր առիթներով, թե՛ իրենց և թե՛ իրենց գործընկերների մասին համահունչ կարծիքներ են հայտնել Ա. Հովհաննիսյանի գործընկերներից շատերը, այդ թվում համաշխարհային ճանաչում ունեցող պատմաբաններ՝ Ալբեր Սորուլը, Վ. Դալինը, Մ. Ներսիսյանը, Անատոլի Ադոն և այլք:

Ա. Հովհաննիսյանի դեռևս առաջին աշխատություններն անսքող բացահայտում են նրա գիտական գործունեությանը բնորոշ հիմնական առանձնահատկություններից մեկը, այն է՝ անկախ նոր մեթոդոլոգիական հիմունքներ կիրառելու հանգամանքից, նա ի սկզբանե ձեռնամուխ է եղել պատմագիտական դեռևս չհետազոտված կամ խիստ նվազ հետազոտված թեմաների ուսումնասիրությանը: Այս հարցը, սակայն, կարիք ունի մեկնաբանությունների: Ա. Հովհաննիսյանը, անհրաժեշտության դեպքում, իր տարբեր գրքերի առաջաբաններում բարեխղճորեն մատնանշում էր այն սակավաթիվ պատմաբանների անունները, որոնք մինչ այդ այս կամ այն չափով իրենց ավանդն էին ներդրել նրա կողմից ուսումնասիրվող թեմաների հետազոտության ասպարեզում: Այդուհանդերձ, նա համեստորեն ձեռնպահ էր մնում նախորդների և իր աշխատությունների միջև առկա էական տարբերությունները մանրամասնելուց՝ թողնելով այդ խնդրի մեկնաբանումն ընթերցողների հայեցողությանը: Փոխարենը, անհրաժեշտության դեպքում, նա չէր վարանում մատնանշել իր նախորդ գրքերում երբեմն տեղ գտած անճշտությունները[23]:

Մեր կողմից նշենք, որ եթե Ա. Հովհաննիսյանի կողմից քննարկված ուտոպիական կոմունիստական գաղափարների պատմության հիմնահարցերի որոշ կողմերի երբեմն անդրադարձած նրա ակավաթիվ նախորդներն, իրենց առջև ծառացած խնդիրներին լուծում են տվել առանց արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության, ուստի և բավականին սահմանափակ կտրվածքով ու ցածր մակարդակով: Ըստ այդմ՝ ֆրանսիական ուտոպիական գաղափարախոսության պատմության տարբեր հիմնախնդիրներին նվիրված նրա ուսումնասիրությունները հարկ է անվերապահորեն համարել նորարարական:

Այս առնչությամբ, մանրամասնենք մեկ այլ հանգամանք ևս. Ա. Հովհաննիսյանի սակավաթիվ նախորդների թվում երբեմն եղել են նաև անվանի պատմաբաններ, ինչպիսիք են նապոլեոնագիտության մեծ երախտավորներ Ալբեր Վանդալը և Էդուարդ Դրիոն: Նրանցից, մասնավորապես երկրորդը մեծ ավանդ ունի Նապոլեոնի արևելյան քաղաքականության պատմության ուսումնասի-

[23] Տե՛ս օրինակ А.Р. Иоаннисян, Революционно-коммунистическое движение во Франции в 1840-1841 гг., с. 10.

ության բնագավառում[24]: Այս ասպարեզում, սակայն, Ա. Հովհաննիսյանի ցուցաբերած մոտեցումն իրավամբ ինքնատիպ էր, քանզի հայտնի իրադարձություններին տված նրա գնահատականները տրամագծորեն զանազանվում էին ֆրանսիացի պատմաբանների (Ա. Վանդալ և այլք) մեկնաբանություններից[25], օրինակ՝ նապոլեոնյան դիվանագիտության հակառուսական քաղաքականության դիմագծի անսքող բացահայտման հարցում (թե՛ մինչև 1807 թ. Տիլզիտի հաշտության կայացումը և թե՛, մասնավորապես դրանից հետո)[26]: Բացի դրանից, գիտական շրջանառության մեջ դնելով արտասահմանյան պատմաբանների, այդ թվում իր նշանավոր նախորդի՝ է. Դրիոյի համար անմատչելի՝ մեծ թվով հայերեն և ռուսերեն սկզբնաղբյուրներ, նա մեծապես նպաստել է միջազգային հարաբերությունների պատմության շուրջ շատ ավելի ամբողջական պատկերացումների ձևավորմանը: Արդյունքում, նա մեկնաբանել է ոչ միայն Արևելքում գերիշխող ազդեցության հաստատման նպատակ հետապնդող Անգլիայի և նապոլեոնյան Ֆրանսիայի անզիջում պայքարը, այլև, փաստորեն, առաջինն է հիմնավորապես բացահայտել եվրոպական գերտերությունների՝ Ռուսաստանին՝ Անդրկովկասի միացմանը խոչընդոտող մեքենայությունները:

Հարկ է մեկնաբանել, որ որոշ սկզբունքային հարցերում Ա. Հովհաննիսյանն՝ իբրև պատմաբան, զանազանվում էր իր խորհրդային սերնդակիցներից: Խոսքը մասնավորապես, վերաբերում է նրա գործընկերների գերակշռող մասի՝ ոչ մարքսիստ պատմաբանների առաջադրած մարքսիստական մեթոդոլոգիային անհարիր հայեցակարգային նոր մոտեցումների նկատմամբ անբարյացակամ տրամադրվածությանը, ինչը պայմանավորված էր նրանց պատմագիտական դաստիարակությամբ և բացահայտորեն իրեն զգալ էր տալիս մինչև նրանց կյանքի վերջին օրերը: Ա. Հովհաննիսյանի դիրքորոշումն այս հարցում փոքրինչ այլ էր: ԽՍՀՄ-ում պատմական գիտության խիստ քաղաքականացվածության պայմաններում, ինչը ցայտունորեն դրսևորվել է նաև 1960-1970-ական թվականներին, խորհրդային պատմաբանները, հիմնվելով մարքսիզմ-լենինիզմի դասականների տեսական դրույթների վրա, դատափետել են և կտրականապես մերժել ոչ միայն արտասահմանյան պատմաբանների՝ մարքսիզմին անհարիր, այլև նույնիսկ սակավաթիվ խորհրդային պատմաբանների, մարքսիստական մեթոդոլոգիայի շրջանակում, Ֆրանսիական հեղափոխության պատմու-

A 93998

[24] **E. Driault**, La politique orientale de Napoléon. Sebastiani et Gardane (1806-1808), Paris, 1904.

[25] **A. Vandal**, Napoléon et Alexandre Ier, Paris, 1891, t. I, p. 225 ; **Quarré de Verneuil**, Napoléon Ier et la Perse, Paris, 1904, p. 20 ; **H. Castonnet des Fosses**, Les relations de la France avec la Perse, Angers, 1889, p. 46.

[26] Ցավոք, ռուսերենի չիմացության պատճառով, նրա գրքին անտեղյակ արտասահմանյան պատմաբաններից ոմանք, 1990-ական թվականներին ևս, իրենց ֆրանսիացի նախորդների հետքերով, այս հարցը քննարկել են առանց հաշվի առնելու Ա. Հովհաննիսյանի իրատեսական մեկնաբանությունները: Տե՛ս օրինակ՝ **I. Amini**, Napoléon et la Perse, Paris, 1995, p. 135.

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱՐԱՐ

թյան մասնավոր հարցերի շուրջ առաջադրած, սակայն, խորհրդային պատմագրության ասպարեզում ինքնահաստատում գտած տեսակետներից շեղվող մեկնաբանությունները: Ա. Հովհաննիսյանը, սակայն, նման բանավեճերի երբևէ չի մասնակցել: 1970 թ. ԽՍՀՄ ԳԱ Համընդհանուր պատմության ինստիտուտի ղեկավարությունը՝ միջազգային պատմագիտական թատերաբեմում մեծ հեղինակություն վայելող պատմաբանին պաշտոնապես հրավիրել է մասնակցելու յակոբինյան դիկտատուրայի դասակարգային էությանն առնչվող խնդիրներին նվիրված քննարկմանը[27]: Գիտակցելով, սակայն, առաջիկա բանավեճի գերքաղաքականացված բնույթը[28], նա, ամենայն հավանականությամբ, այդ իսկ պատճառով խուսափել է դրան մասնակցելուց:

Տողերիս հեղինակն այս մասին կարող է դատել նաև՝ ելնելով Ա. Հովհաննիսյանի հետ ունեցած անձնական շփումներից: Մի առիթով, նա անդրադարձավ XVIII դարի Ֆրանսիական հեղափոխության պատմության խոշորագույն պատմաբաններից մեկի՝ Ժակ Գոդշոյի (Ֆրանսիա)՝ 1950-ական թվականներին առաջադրած «ատլանտյան հեղափոխության» տեսությանը, որն, ըստ էության, միտված էր 1949 թ. ձևավորված Հյուսիս-Ատլանտյան դաշինքի հիմնավորմանը: Ըստ այս տեսության՝ Ֆրանսիական հեղափոխությունը հարկ է ընդգրկել XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի սկզբին ամերիկյան և եվրոպական մայրցամաքներում բռնկված բուրժուական հեղափոխությունների ընդհանուր շղթայում և այն դիտել իբրև դրա բաղկացուցիչ մաս: Արևմտյան բուրժուական հեղափոխությունների պատմության մարքսիստական ընկալումից և մեկնաբանումից ամբողջությամբ շեղվող այս տեսության հանդեպ, որն, ի դեպ, արժանացել էր Ա. Հովհաննիսյանի գործընկերներից շատերի՝ խորհրդային և արտասահմանյան մարքսիստ պատմաբանների (Ա. Մանֆրեդ, Ա. Սոբուլ և այլք) անողոք քննադատությանը, նա ցուցաբերում էր շատ ավելի հանդուրժողական վերաբերմունք: Այս առիթով, նա մեղմ ձայնով հայտնեց իր չափավոր և, ըստ իս, շատ ավելի ընդունելի կարծիքը. «Եթե Գոդշոն իր տեսությունն «ատլանտյան» չանվաներ, այն իր շուրջ նման աղմուկ չէր վեր հանի»:

Ա. Հովհաննիսյանին բնորոշ առանձնահատկություններից էր ստեղծագործական ուժերի կենտրոնացումը գլխավորապես մենագրությունների վրա: Քաջ գիտակցելով, որ ապրելու են գրքերը և ոչ թե հոդվածները, մի առիթով, նա

---

[27] Նրա արխիվում պահպանվել է ԽՍՀՄ ԳԱ Համընդհանուր պատմության ինստիտուտի՝ 1970 թ. ապրիլի 21-ի թվակիր պաշտոնական հրավերը. ՀՀ ԱԱ, ֆ. 1169, ց. 1, գ. 257, թ. 30:

[28] Проблемы якобинской диктатуры. Симпозиум в секторе истории Франции Института всеобщей истории АН СССР 20-21 мая 1970 г. // Французский ежегодник – 1970, М., 1972, с. 272-313. Այդ մասին մանրամասն տե՛ս С.Е. Летчфорд, В.Г. Ревуненков против "московской школы": дискуссия о якобинской диктатуре // Французский ежегодник – 2002, М., 2002, с. 207-222; А.В. Чудинов, Размышления о скрытых смыслах дискуссии по проблемам якобинской диктатуры (60-е-80-е годы XX в.) // Французский ежегодник - 2007, М., 2007, с. 256-265.

պարզորոշ հայտնեց իր կարծիքը. «Ես հոդվածներ գրել չեմ սիրում»: Այստեղ, անկասկած, նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ նա, ինչպես և յուրաքանչյուր խորհրդային պատմաբան, միանգամայն իրավամբ դժգոհում էր ԽՍՀՄ-ում հրատարակվող պատմագիտական պարբերականների (ի տարբերություն ֆրանսիական պարբերականների) խմբագրությունների կողմից հաճախ արվող անպատեհ շտկումներից կամ անհարկի կրճատումներից, որոնք, ըստ էության, կատարվում էին՝ առանց հեղինակի կարծիքը հաշվի առնելու: Ամեն դեպքում, անժխտելի է նաև այն, որ նա հակված չէր ուժերի ցրմանը: Հիշում եմ, թե ինչպես 1982 թ. նա դիվանագիտորեն մերժեց «Ֆրանսիական տարեգրքի» ղեկավարության՝ իր «Հեղափոխական-կոմունիստական շարժումը Ֆրանսիայում 1840-1841 թթ.»՝ դեռևս ծեռագիր աշխատության գլուխներից մեկը՝ հոդվածի ձևով տպագրության ներկայացնելուն վերաբերվող առաջարկը[29]:

Ի տարբերություն խորհրդային և արտասահմանյան իր գործընկերներից շատերի (Ա. Մանֆրեդ, Վ. Դալին, Ժ. Գոդշո և այլք)՝ Ա. Հովհաննիսյանը երբևէ ցանկություն չի դրսևորել անդրադառնալու իր նախորդների գիտական ժառանգության քննական վերլուծությանը: Գրեթե միևնույն վերաբերմունքն էր նա ցուցաբերում իր գործընկերների աշխատությունների հանդեպ, ծեռնպահ մնալով նույնիսկ գրախոսականների միջոցով պատմագիտական մտքի նորագույն նվաճումների արժևորումից: Ա. Հովհաննիսյանը, գիտական երկարամյա գործունեության ընթացքում գրախոսել է սոսկ մի քանի գիտական հրատարակություններ: Համեմատության կարգով նշենք, որ նրա սերնդակից Ժ. Գոդշոյի գրչին պատկանում է ավելի քան հազար գրախոսություն:

Եթե Ա. Հովհաննիսյանի գործընկերներից ոմանց (Ա. Մանֆրեդ, Վ. Դալին, Վ. Տրուխանովսկի, Սերգեյ Տիխվինսկի, Գրիգորի Սևոստյանով, Մ. Ներսիսյան) գիտական գործունեության մեջ պատկառելի տեղ է զբաղեցրել խմբագրական աշխատանքը, ապա նույնը չի կարելի ասել նրա մասին: Նա խմբագրել է մի սոսկ քանի գրքեր[30], ընդգրկվել սակավաթիվ պատմագիտական հրատարակությունների խմբագրական հանձնախմբերի կազմում[31], այդ թվում գլխավորել է «Գրական հուշարձաններ» մատենաշարի խմբագրական հանձնախումբը:

---

[29] Նրա արխիվում պահպանվել են միութենական տարբեր հեղինակավոր պատմագիտական հրատարակությունների կողմից արված՝ հոդվածներ գրելուն առնչվող բազմաթիվ առաջարկներ, որոնց նա դրականորեն չի արձագանքել:

[30] Հայ ժողովրդի պատմություն, առաջին մաս, Երևան, 1951; История армянского народа, Ереван, 1951; Վ.Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Երևան, 1958:

[31] Всемирная история, т. VI, М., 1959; В.П. Волгин, Очерки истории социалистических идей. С древности до конца XVIII в., М., 1975; *նույնի՝* Очерки истории социалистических идей. Первая половина XIX в., М., 1976; *նույնի՝* Развитие общественной мысли во Франции в XVIII веке, М., 1977; *նույնի՝* Французский утопический коммунизм, М., 1979; *նույնի՝* Статьи и выступления, М., 1979.

Ըստ Մ. Ներսիսյանի վկայության՝ Ա. Հովհաննիսյանը պարբերաբար մերժել է նաև «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրական հանձնախմբում ընդգրկվելու առաջարկը:

Փոխարենը, Ա. Հովհաննիսյանը չի զլացել զբաղվելու մանկավարժական և վարչական աշխատանքներով: 1931-1960 թթ. նա դասավանդել է Երևանի պետական համալսարանում, 1938-1960 թթ. եղել Նոր դարի պատմության ամբիոնի վարիչ, իսկ 1938-1947 թթ.՝ պրոռեկտոր: Լինելով գիտության մեծ կազմակերպիչ՝ նա շուրջ չորս տասնամյակ ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքում զբաղեցրել է ղեկավար բարձր պաշտոններ՝ պատմության ինստիտուտի տնօրենի (1947-1953), ակադեմիկոս-քարտուղարի (1949-1960), փոխնախագահի (1960-1963, 1967-1986) և այլն: Նրա անմիջական ջանքերի շնորհիվ սերտ կապեր հաստատվեցին Հայաստանի և Հունգարիայի գիտությունների ակադեմիաների միջև, որի արդյունքում երկու հաստատությունների պատմաբանների մասնակցությամբ հրատարակվեց հայ-հունգարական առընչությունների պատմությանը նվիրված հոդվածների արժեքավոր ժողովածու[32]:

Այդուհանդերձ, Ա. Հովհաննիսյանը հակված չէր թմբկահարելու իր հաջողությունները, թեև դրա համար ուներ լայն հնարավորություններ: Իր ծննդյան 70-ամյակի առնչությամբ, 1978 թ. մարտի 6-ի թվակիր նամակով նա դիմել է ՀԽՍՀ ԳԱ նախագահ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին խնդրանքով՝ ձեռնպահ մնալու իր հոբելյանը նշելու հետ կապված միջոցառումների կազմակերպումից. «Ես չեմ ցանկանում, որ իմ մասին մամուլում որևէ հոդվածներ կամ նշումներ տպագրվեն: Մի խոսքով, ես, իրոք որ, ոչ միայն անկեղծորեն չեմ ցանկանում, որ իմ յոթանասունամյակն այս կամ այն ձևով նշվի, այլև նույնիսկ հիշատակվի»[33]: Ա. Հովհաննիսյանը, հիրավի, չէր ողջունում իր հոբելյանների առիթով հոդվածների լույս ընծայումը: Նրա ծննդյան 75-ամյակի կապակցությամբ, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում, առանց նրա գիտության, տպագրված հոդվածի[34] առնչությամբ, ըստ դրա հեղինակներից մեկի՝ Վ. Դալինի վկայության, նա վերջինիս հայտնել է սոսկ իր դժգոհությունն ու վրդովմունքը:

Ինչ վերաբերում է Ա. Հովհաննիսյանի անհատականությանը, ապա անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրել նրա բարձր ինտելեկտի վրա: Բավարարվենք մեկ օրինակով: 1977 թ. մայիսին, դեռևս Երևանի պետական համալսարանի 5-րդ կուրսի ուսանող տողերիս հեղինակին զանգահարեց նրա՝

---

[32] Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից, Երևան, 1983:
[33] ՀՀ ԱԱ, ֆ. 1169, ց. 1, գ. 249, թ. 1:
[34] В. Далин, В. Микаелян, Выдающийся историк и крупный организатор науки // Вестник общественных наук АН Армянской ССР, 1983, N 6, с. 99-103.

ԳԱ փոխնախագահի քարտուղարուհին և ասաց. «Աբգար Ռուբենովիչը ձեզնից ներողություն է խնդրում, նա ձեզ այսօր ընդունել չի կարող»:

Ա. Հովհաննիսյանի ծառայություններն, անտարակույս, գնահատվել են խորհրդային իշխանության կողմից: Ինչպես նշեցինք, նա զբաղեցրել է բարձր ակադեմիական պաշտոններ, արժանացել նաև տարբեր շքանշանների ու մեդալների: Թերևս այս պատճառներով շատերը Հայաստանում նրան դասում են գնահատված պատմաբանների շարքում: Մասամբ դա, հիրավի, այդպես է: Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ Ա. Հովհաննիսյանն, այդուհանդերձ, հայրենական այն պատմաբաններից էր, որի գիտական գործունեության շառավիղները հատում էին նեղ ազգային և հանրապետական շրջանակները: Ուստի մեզ իրավասու ենք համարում այս հարցը քննարկել ավելի լայն հենքի վրա:

Պատմաբանները ոչ միայն տարբեր գիտական հետաքրքրություններ ունեն, այլև հաճախ անհարիր մոտեցումներ առօրեական, այդ թվում ակադեմիական խնդիրների նկատմամբ: Ըստ այդմ՝ ցանկանում ենք մանրամասնել պատմագիտական իրականությանը բնորոշ ցավոտ մի իրողություն: Խորհրդային անվանի պատմաբանների, որոնց թվում Ա. Հովհաննիսյանի գործընկերներից շատերի, դիրքորոշումները ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս ընտրվելու հարցում եղել են անհամատեղելի: Նրանցից ոմանց (Վ. Դալին, Ն. Մոլչանով, Եֆիմ Չերնյակ և այլք) այս հարցն ամենևին չէր մտահոգում: Փոխարենը, շատերը (Ա. Մանֆրեդ, Բ. Պորշնև, Ս. Ուտչենկո, Միխաիլ Բարգ և այլք), հաշվի առնելով իրենց մեծ ավանդը պատմագիտության զարգացման այս կամ այն բնագավառում, ցանկություն են դրսևորել ընտրվելու ԽՍՀՄ ԳԱ անդամ:

Ա. Հովհաննիսյանը, ունենալով դրա համար պատմագիտական բոլոր իրավասությունները, վերջինների թվում էր: Ճակատագրի քմահաճ հեգնանքով, սակայն, նրա, ինչպես նաև նրա գործընկերներից շատերի, որոնց համբավը վաղուց ի վեր դուրս էր եկել ԽՍՀՄ սահմաններից, իսկ վաստակը հավուր պատշաճի արժևորվել տարբեր երկրներում, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս ընտրվելու մտադրությունը մնաց սոսկ ցանկությունների հարթության վրա: Խորհրդային ակադեմիայի ակադեմիկոսների գերակշռող մասը, գիտության հետ հեռավոր առնչություն չունեցող պատճառներով, համառորեն և հետևողականորեն ընդդիմանում էր նրանց ընտրությանը:

1964-1984 թթ. Ա. Հովհաննիսյանը բազմիցս մասնակցել է ԽՍՀՄ ԳԱ ընտրություններին, հավակնել թե՛ ակադեմիայի թղթակից-անդամի և թե՛ ակադեմիկոսի տեղերին, սակայն, մրցապայքարից միշտ դուրս է մնացել ընտրությունների առաջին իսկ փուլից հետո: Նրա՝ միմյանց հաջորդած անհաջողությունների պարագայում կային, մեզ հայտնի, երկու անբարենպաստ պատճառներ: Լինելով խիստ զուսպ անձնավորություն՝ նա երբևէ ի դերև չէր բերում իր հույզերը, առավել ևս նման նուրբ հարցերի կապակցությամբ: Մի առիթով, սակայն, 1990

թ., որքան դա տարօրինակ էր և անհավանական, Ա. Հովհաննիսյանն, այդուհանդերձ, տողերիս հեղինակին մատուցեց անսպասելի անակնկալ՝ հարևանցիորեն ակնարկելով իր ազգային պատկանելության փաստը՝ իբրև ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս ընտրվելուն խոչընդոտող հանգամանք: Զրույցի ընթացքում նա հիշատակեց ԽՍՀՄ ԳԱ Ընդհանուր պատմության ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Զուբարյանի օրինակը. «Կա չգրված մի օրենք, բոլորը պետք է ռուս լինեն: Տեսնում եք, թե Զուբարյանը որքան գրքեր ունի և լավ գրքեր, բայց նրան ևս չեն ընտրում ակադեմիայի անդամ» (վերջինս, այնուամենայնիվ, մեծ ուշացումով ընտրվեց ՌԴ ԳԱ անդամ): Ա. Հովհաննիսյանին լավ ճանաչող անձանց համար դժվար չի լինի, անշուշտ, կռահելը, թե ինչ չափերի էր հասնում նրա անձնական վիրավորանքը, ինչը թաքցնելն արդեն անզոր էր նույնիսկ նրա անսասան կամքի և մեծ հավասարակշռվածության տեր անձնավորությունը: Տասնհինգ տարի տևած գիտական մեր շփումների ընթացքում սա միակ դեպքն էր, երբ նա քողարկված ձևով հայտնեց իր դժգոհությունն այն կացության առնչությամբ, որում գտնվում էր:

Ինչ վերաբերում է երկրորդ հիմնական պատճառին, ապա այն, 1981 թ. դեկտեմբերին, տողերիս հեղինակի հետ ունեցած զրույցի ընթացքում մեկնաբանեց ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկին՝ ԽՍՀՄ ԳԱ ընտրություններից անմիջապես հետո: Խիստ վրդովված ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոսների գերակշռող մասի՝ Ա. Հովհաննիսյանի հանդեպ հերթական անգամ ցուցաբերած բացահայտ կողմնակալ վերաբերմունքի առիթով, որը նրան խորապես հուզել էր, նա կսկիծով հայտնեց նրանց դիրքորոշման վրա լույս սփռող մի մանրամասն: Ըստ Բ. Պիոտրովսկու խոսքերի՝ քվեարկությունից առաջ տեղի ունեցած մտքերի փոխանակության ընթացքում, ակադեմիկոսներից ոմանք Ա. Հովհաննիսյանի ընտրության առնչությամբ բացահայտորեն հայտնել էին իրենց ժխտական վերաբերմունքը՝ այն պատճառաբանելով վերջինիս բնակության վայրով. «Իսկ ինչո՞վ է նա մեզ օժանդակելու մեր աշխատանքներում»:

Անկողմնակալ լինելու համար, հարկ ենք համարում նկատել, որ բացի Բ. Պիոտրովսկուց, ԽՍՀՄ ԳԱ տարբեր ընտրությունների ժամանակ նրան պարբերաբար սատարել են նաև այլ ակադեմիկոսներ, մասնավորապես Միլիցա Նեչկինան և Ս. Տիխվինսկին, որոնց ջանքերը, սակայն, շոշափելի արդյունքի չեն հանգեցրել:

Ինչպես տեսնում ենք, Ա. Հովհաննիսյանի՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս չընտրվելու իրողությունը հեռավոր իսկ առնչություն չի ունեցել նրա գիտական անուրանալի վաստակի թերագնահատման հետ, քանզի նման հարց երբևէ նույնիսկ չի քննարկվել: Ուստի մենք հակված ենք հավաստելու, որ նրա բեղմնավոր գիտական գործունեությունը, ինչպես նաև խորհրդային ու համաշխարհա-

յին պատմագրության ասպարեզում ներդրած մեծ ավանդը խորհրդային ակադեմիան ըստ արժանվույն չի գնահատել:

Պատմագիտական իրականությանը խիստ բնորոշ է ևս մեկ դառն օրինաչափություն. մեծ պատմաբանների գերակշռող մասի ժամանակակիցներից շատերը նրանց կենդանության օրոք նույնիսկ չեն գիտակցել, թե գիտության ինչպիսի տաղանդավոր մշակների հետ է իրենց վիճակված եղել համագործակցելու: Իրենց նախորդներին նվիրված թե՛ բանավոր և թե՛ գրավոր ելույթներում այս ցավալի փաստը հավաստել են շատերը[35]: Այս առումով, սակայն, Ա. Հովհաննիսյանը, մեր կարծիքով, եզակի հաջողակ պատմաբաններից էր և ճակատագրից դժգոհելու ոչինչ չուներ, քանզի նրա կենդանության օրոք կարծիքը նրա՝ իբրև մեծ պատմաբանի մասին, միանշանակ էր: Անկախ սերունդների տարբերության հանգամանքից, Արևմտյան Եվրոպայի պատմության ուսումնասիրողների համար նա անառարկելի և անվերապահ հեղինակություն էր:

1991 թ. դեկտեմբերին վրա հասած նրա վախճանից հետո անցել են տարիներ: Այսօր արդեն կենդանի չեն նրա սերնդակիցները՝ թե՛ բարեկամները և թե՛ հակառակորդները: Ժամանակակիցներից ոմանց մոտ նրա հանդեպ արմատացած կողմնակալ վերաբերմունքը ևս մնացել է անցյալի գրկում: Պատմաբանի հիսմար ամենաանողոք և միաժամանակ միակ անկողմնակալ դատավորը ժամանակի քննությունն է, որին դիմակայում են սոսկ նրա գրչին պատկանող մնայուն գիտական ուսումնասիրությունները: Ա. Հովհաննիսյանի մենագրությունները, նրա մտերիմ գործընկերներից Ա. Մանֆրեդի և Վ. Դալինի՝ Ֆրանսիայի Նոր դարի պատմությանը նվիրված մեծարժեք գրքերի հետ մեկտեղ, շարունակում են ապրել: Նրա գրքերը, որոնց վիճակված է երկար կյանք, հղում են թե՛ Ֆրանսիայի և թե՛ հայ ժողովրդի պատմության մասնագետները, այդ թվում նրա հետ երբևէ անձնական շփումներ չունեցած՝ պատմաբանների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, դրանով իսկ անմար պահելով ականավոր պատմաբանի հիշատակը պատմական գիտության տատասկոտ քառուղիներում:

Աբգար Հովհաննիսյանի՝ իբրև մեծ պատմաբանի համառոտ, սակայն, ընդգրկուն գնահատականը դեռևս 1975 թ. հուլիսին, Էրմիտաժի իր աշխատասենյակում, անձնական զրույցի ընթացքում, տվեց ակադեմիկոս Պիոտրովսկին. «Աբգար Ռուբենովիչը խորհրդային ակադեմիայի զարդն է»: Նրա անունն, անտարակույս, իբրև այդպիսին կդրոշմվի պատմաբանների գալիք սերունդների հավաքական մտածողության մեջ:

Վարուժան Պողոսյան

---

[35] Տե՛ս օրինակ М.А. Барг, Владимир Михайлович Лавровский // Портреты историков. Время и судьбы, т. 2. Всеобщая история, с. 227.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Հովհաննիսյանը՝ ակադեմիկոս Վ.Պ. Վոլգինի մրցանակի դափնեկիր // Սովետ. Հայաստան.– 1975, 6 ապր.:

Ա.Ռ. Հովհաննիսյան: /Մահախոսական/ // Հայաստանի Հանրապետություն.– 1991, 10 դեկտ.:

Ա.Ռ. Հովհաննիսյան: /Մահախոսական/ // Լրաբեր հաս. գիտ.– 1991, թիվ 6, էջ 160:

Ա.Ռ. Հովհաննիսյան: /Մահախոսական/ // Պատմաբանասիր. հանդես.– 1992, թիվ 1, էջ 234:

Աբգար Հովհաննիսյան. 90 // Գիտություն.– 1998, 1-15 հուլիսի:

/Աբգար Հովհաննիսյանի ծննդյան 60-ամյակի առիթով/ // Պատմաբանասիր. հանդես.–1968, թիվ 2, էջ 257-258:

Ակադեմիկոս Ա.Ռ. Հովհաննիսյան: /Ծննդյան 60-ամյակի առիթով/ // Լրաբեր հաս. գիտ.– 1968, թիվ 5, էջ 115-118:

Բարխուդարյան Վ. Ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյան: /Ծննդյան 100-ամյակի առթիվ/ // Պատմաբանասիր. հանդես.– 2008, թիվ 2, էջ 265-270:

Գիւզալեան Գ. /Գրախոսություն/ // Հայրենիք /Բոստոն/, 1949, թիվ 5, էջ 103-106: Գրախոս. Հովհաննիսյան Ա.Ռ. Հովսեփ Էմին.– 1945.– 352 էջ: /Ռուս. լեզվ./:

Գրիգորյան Վ.Ռ. Աբգար Հովհաննիսյան // Պատմաբանասիր. հանդես.– 1983, թիվ 2, էջ 212-215:

Խուդավերդյան Կ. Պատմաբան Աբգար Հովհաննիսյան // Սովետ. Հայաստան.– 1966, թիվ 5, էջ 101-102:

Հովհաննիսյան Ա.Ռ. // Հայկական սովետական հանրագիտարան.– Հ. 6. – Եր.– 1980, էջ 567-568: // Հայկական համառոտ հանրագիտարան.– Հ. 3., Եր.– 1999, էջ 392:

Մարտիրոսյան Ռ., Բարխուդարյան Վ. Մեծահամբավ պատմաբանը, գիտության տաղանդավոր կազմակերպիչը և մանկավարժը: /Ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակի առթիվ/ // Գիտություն.– 2008, թիվ 2, հուլիս:

Պողոսյան Վ. Ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյան: Ծննդյան 100-ամյակի առիթով // Ազգ.– 2008, 14 հունիսի:

Պողոսեան Վ. Աբգար Յովհաննիսեան. պատմաբանի դիմանկարը: /Ծննդյան 100-ամեակի առիթով/ // Հանդէս ամսօրեայ.– 2008, թիվ 1-12, էջ 423-450:

Ստեփանյան Գ. Հովհաննիսյան Աբգար // Կենսագրական բառարան. – Հ. 2. – Եր.– 1981, էջ 202-203:

А. Иоаннисян – лауреат премии имени академика В.П. Волгина // Коммунист.– 1975, 30 марта.

Абгар Иоаннисян // Литературная Армения.– 1968, N 5, с. 101-102.

Абрамян А.Г. О некоторых ошибках проф. А.Р. Иоаннисяна, допущенных в книге "Иосиф Эмин" // Вестник: обществ. науки / АН АрмССР.– 1948, N 8, с. 61-68.

Адо А.В. /Рецензия/ // Вопросы истории.– 1968, N 8, с. 169-171. – Рец.: Иоаннисян А.Р. Коммунистические идеи в годы Великой французской революции.– М., 1966.– 432 с.

Барсегян Х. Изучая историю Франции // Коммунист.– 1986, 23 авг.

Бучаралзе Г.С. Ретиф де ла Бретонн в России.– Тбилиси, 1972, с. 81-83.

Восканян В. Выдающийся советский историк. К 60-летию со дня рождения А.Р. Иоаннисяна // Коммунист.– 1968, 30 мая.

Далин В.М. Изучение истории французского социализма (до 1914 г.) в советской науке // Новая и новейшая история.– 1974, N 2, с. 151.

Далин В.М. Историки Франции XIX-XX веков.– М., 1981, с. 159-160.

Далин В., Микаелян В. Выдающийся историк и крупный организатор науки // Вестник обществ. наук / АН АрмССР.– 1983, N 6, с. 99-103.

Дунаевский В.А. Советская историография новой истории стран Запада 1917-1941 гг.– М., 1974, с. 205-206, 211-212.

Дунаевский В.А., Поршнев Б.Ф. Изучение западноевропейского утопического социализма в советской историографии (1917-1963) // История социалистических учений. Памяти академика В.П. Волгина.– М., 1964, с. 34, 42-44, 55-56, 59.

Дунаевский В.А., Кучеренко Г.С. Западноевропейский утопический социализм в работах советских историков.– М., 1981, с. 49-50, 58-61, 73-74, 77-78, 122-127.

Заходер Б. /Рецензия/ // Вопросы истории.– 1946, N 11-12, с. 155-157. Рец.: Иоаннисян А.Р. Иосиф Эмин.– Ер., 1945.– 352 с.

И.С. Присуждение премии имени академика В.П. Волгина // Французский ежегодник – 1974.– М., 1976, с. 338.

Иоаннисян Абгар Рубенович // Советская историческая энциклопедия.– Т. 6. – М., 1965, с. 175. // Большая советская энциклопедия.– Т. 10. – М., 1972, с. 365. // Советский энциклопедический словарь.– М., 1980, с. 506.

/Погосян В.А./ Абгар Рубенович Иоаннисян (1908-1991) // Новая и новейшая история.– 1992.– N 2, с. 222.

Погосян В.А. Абгар Рубенович Иоаннисян: портрет историка: (К 100-летию со дня рождения) // Французский ежегодник – 2008 – М., 2008.

Поршнев Б.Ф., Кучеренко Г.С. /Рецензия/ // Новая и новейшая история.– 1967, N 5, с. 172-174. – Рец.: Иоаннисян А.Р. Коммунистические идеи в годы Великой французской революции.– М., 1966.– 432 с.

Премия имени В.П. Волгина – А.Р. Иоаннисяну // Известия АН СССР.– 1975, N 2, с. 127.

Ревякин А.В. /Рецензия/ // Новая и новейшая история.– 1987, N 5, с. 216-221. – Рец.: Иоаннисян А.Р. К истории французского утопического коммунизма первой половины XIX столетия.– М., 1981.– 176 с.

Ревякин А.В. /Рецензия/ // Новая и новейшая история.– 1987, N 5, с. 216-221. // История социалистических учений – 1987.– М., 1987, с. 274-279. – Рец.: Иоаннисян А.Р. Революционно-коммунистическое движение во Франции в 1840-1841 гг.– М., 1983.– 272 с.

Ревякин А.В. /Рецензия/ // Новая и новейшая история.– 1987, N 5 с. 216-221. Рец.: Иоаннисян А.Р., Революционно-коммунистическое движение во Франции в 1842-1847 гг.– М., 1986.–336 с.

Семенов Л.С. /Рецензия/ // Вопросы истории.– 1961, N 3, с. 148-151. Рец.: Иоаннисян А.Р. Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия.– Ер., 1958.– 447 с.

Юбилей А.Р. Иоаннисяна // Новая и новейшая история.– 1968, N 5, с. 187-188.

Godechot J. /Rec. ed. op.:/ // Revue historique /Paris/. 1987. N 561, p. 197-198. – Rec.: Ioannissian A. Les idées communistes pendant la Révolution française.– M., 1984.– 535 p.

Markov W. /Rec. ed. op.:/ // Zeitschrift für Geschichtswissenschaft /Berlin/, 1968, H. 2, S. 238-239. – Рец.: Иоаннисян А.Р. Коммунистические идеи в годы Великой французской революции.– М., 1966.– 432 с.

Middell K. /Rec. ed. op.:/ // Zeitschrift für Geschichtswissenschaft.– 1986, H. 3, S. 273. – Rec.: Ioannissian A. Les idées communistes pendant la Révolution française.– M., 1984.– 535 p.

/Rec. ed. op.:/ // Československý časopis historický /Praha/, 1982, N 6, s. 912. Рец.: Иоаннисян А.Р. К истории французского утопического коммунизма первой половины XIX столетия.– М., 1981.– 176 с.

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

1930

Ռետիֆ դը լա Բրետոնը և նրա ուտոպիան // Հ. Ս. Խ. Հ. պետ. համալսարանի գիտ. տեղեկագիր, թիվ 6, էջ 209-279:

1931

Утопия Ретифа де ла Бретона // Известия АН СССР, VII серия. Отделение общественных наук, N 2, с. 171-200; N 7, с. 833-856.

1936

Ретиф де ла Бретон // Ретиф де ла Бретон. Южное открытие, произведенное летающим человеком, или французский Дедал.– М.-Л.– С. V-LVIII.

Ретиф де ла Бретон и французский реализм XIX века // Литературный критик, N 7, с. 41-70.

1939

Генезис общественного идеала Фурье.– М.-Л.: Изд-во АН СССР.– 224 с.

Источники проектов ассоциаций Фурье // Историк-марксист, N 1, с. 101-124.

1941

Шарль Фурье.– Ер.: Изд-во гос. ун-та.– 140 с.

Нашествие Наполеона на Россию и Отечественная война 1812 г. // Коммунист (Ереван), 5 июля.

1945

Иосиф Эмин.– Ер.: Изд-во гос. ун-та.– 352 с.

1946

Армянское национально-освободительное движение в 60-х гг. XVIII столетия // Известия Академии наук СССР. Серия истории и философии. Т. III, N 2, с. 135-144.

1947

Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия.– Ер.: Изд-во гос. ун-та – 285 с.

Русская дипломатия и армянский вопрос в 80-х годах XVIII столетия // Вопросы истории, N 6, с. 94-105.

1948

К истории возникновения "Западни честолюбия" // Տեղեկագիր. հաս. գիտ. / ՀՍՍՀ ԳԱ, թիվ 3, էջ 11-25:

Несколько замечаний по поводу статьи А.Г. Абрамяна // Տեղեկագիր. հաս. գիտ. / ՀՍՍՀ ԳԱ, թիվ 8, էջ 69-78:

1950

По поводу моей книги "Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия" // Տեղեկագիր. հաս. գիտ. / ՀՍՍՀ ԳԱ, թիվ 4, էջ 83-88:

1951

Հայ ազատագրական շարժումները XVIII դարի երկրորդ կեսում // Հայ ժողովրդի պատմություն. առաջին մաս – Եր.– էջ 309-318:

Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի 80-90-ական թվականներին // Նույն տեղում, էջ 318-326:

Армянское освободительное движение во второй половине XVIII века // История армянского народа. Часть первая.– Ер.– С. 257-265.

Армяно-русские отношения в 80-90-х годах XVIII столетия // Там же.– С. 265-273.

1953

Борьба Англии и Франции против присоединения Армении к России // Տեղեկագիր. հաս. գիտ., թիվ 3, էջ 49-62:

1955

/Рецензия/ // Вопросы истории, N 10, с. 150-155. Рец.: *Puryear Vernon J.* Napoleon and the Dardanelles. Berkeley and Los Angeles.– 1951.

1956

Ղարաբաղի և Սյունիքի պայքարը թուրքական նվաճողների դեմ իրենց անկախությունը պահպանելու համար 1725-1728 թթ. // Հայ ժողովրդի պատմություն. առաջին մաս – Եր.– էջ 370-380:

Հայաստանը 18-րդ դարի 30-40-ական թվականներին // Նույն տեղում, էջ 381-386:

Армения // Очерки истории СССР. Период феодализма. Россия во второй половине XVIII в.– М.– С. 736-754. (Соавт.: П.Т. Арутюнян).

Французское посольство в Иране в 1796 г. // Советское востоковедение.– N 1, с. 162-172.

1957

Из истории идей утопического коммунизма во Франции в период Директории // Вопросы истории.– N 6, с. 115-125.

Из истории франко-русских отношений на Востоке в 1807-1808 гг. // Տեղեկագիր. հաս. գիտ., թիվ 6, էջ 27-51:

1958

Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия / АН АрмССР. Ин-т истории.– Ер.: Изд-во АН АрмССР.– 447 с.

Шарль Фурье.– М.: Изд-во АН СССР.– 152 с.

/Рецензия/ // Новая и новейшая история, N 6, с. 162-165. Рец.: *Manuel F.E.* The New World of Henri Saint-Simon, Cambidge (USA) .– 1956.

1961

Из истории утопического коммунизма во Франции в начале XIX столетия // Новая и новейшая история.– N 3, с. 58-69.

1962

Джон Освальд и "Социальный кружок" // Новая и новейшая история.– N 3, с. 59-75.

1963

Из истории коммунистических идей в 1792-1796 гг. // Французский ежегодник – 1962.– М.– С. 100-129.

"Социальный план" Жана Клода Шапюи // Новая и новейшая история.– N 2, с. 118-132.

1964

Об авторе "Предвестника изменения всего мира" // Новая и новейшая история.– N 6, с. 96-103.

[Выступление на заседании Всесоюзного совещания о мерах улучшения подготовки научно-педагогических кадров по историческим наукам 18 декабря 1962 г.] // Всесоюзное совещание о мерах улучшения подготовки научно-педагогических кадров по историческим наукам. 18-21 декабря 1962 г.– М.– С. 83-87.

Книга о развитии социалистических идей // Коммунист.– N 5, с. 126-128. Рец.: История социалистических учений.– М., 1962.

1965

Мишель Кювер в годы революции // Французский ежегодник – 1964.– М.– С. 50-56.

/Рецензия/ // Вопросы истории.– N 1, с. 155-158. Рец.: *Далин В.М.* Гракх Бабеф накануне и во время Великой французской революции (1785-1794).– М., 1963.

1966

Коммунистические идеи в годы Великой французской революции / АН СССР. Ин-т истории. АН АрмССР.– М.: Наука.– 432 с.

Sur l'auteur de « L'avant coureur du changement du monde entier » // Annales historiques de la Révolution française /Paris/.– N 2 (184), p. 1-16.

La première ébauche du « plan » de Lange // Ibid., p. 16-18.

1967

/Рецензия/ // Вопросы истории, N 2, с. 171-173. Рец.: *Робеспьер М.* Избранные произведения в трех томах.– Т. 1-3.– М., 1965.

1970

Франсуа Буассель и идея социализма в годы Французской революции // Век Просвещения.– М.–Париж.– С. 289-304.

François Boissel et l'idée du socialisme pendant la Révolution française // Au siècle des Lumières.– M., Paris.– P. 287-304.

Робер Франсуа Девон // Новая и новейшая история.– N 4, с. 36-41.

1971

Буассель // Большая советская энциклопедия.– Т. 4, с. 82.

1977

Из истории французского утопического коммунизма в 20-30-х гг. XIX столетия // Новая и новейшая история.– N 3, с. 35-51.

"Проект философской общины" Юлея // Вопросы истории.– N 12, с. 209-214.

Contribution à l'histoire des idées communistes de l'époque de la Grande Révolution française (Jean-Claude Chappuis) // La France dans les recherches des historiens soviétiques.– M.– P. 60-75.

1980

Жюль Гей и пути развития французского утопического коммунизма в 30-40-ых годах XIX столетия // Новая и новейшая история.– N 1, с. 80-91; N 2, с. 120-135.

1981

К истории французского утопического коммунизма первой половины XIX столетия / АН СССР. Ин-т всеобщ. истории.– М.: Наука.– 176 с.

[Выступление на заседании группы по истории социалистических идей при Институте истории АН СССР от 30 марта 1960 г.] // *Дунаевский В.А., Кучеренко Г.С.*, Западноевропейский утопический социализм в работах советских историков.– М.– С. 239-246.

1983

Революционно-коммунистическое движение во Франции в 1840-1841 гг. / АН СССР. Отд-ние истории.– М.: Наука.– 272 с.

1984

Les idées communistes pendant la Révolution française.– M.: Editions du Progrès.– 535 p.

1985

/Рецензия/ // Новая и новейшая история.– N 4, с. 162-165. Рец.: *Далин В.М.* Из истории социальной мысли во Франции.– М., 1984.

1986

Революционно-коммунистическое движение во Франции в 1842-1847 гг. / АН СССР. Ин-т всеобщ. истории.– М.: Наука.– 336 с.

1989

Революция 1848 года во Франции и коммунизм / АН СССР. Ин-т всеобщ. истории.– М.: Наука.– 320 с.

Иосиф Эмин / АН АрмССР. Ин-т истории.– Ер.: Изд-во АН АрмССР.– 290 с.

La Révolution française et le mouvement socialiste de la première moitié du XIXe siècle // L'Image de la Révolution française. Communications présentées lors du Congrès Mondiale pour le Bicentenaire de la Révolution. Sorbonne, Paris, 6-12 juillet 1989. Dirigé par *Michel Vovell*. Paris.– V. 3.– P. 1705-1708.

1990

Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия / АН АрмССР. Ин-т истории.– Ер.: Изд-во АН АрмССР.– 193 с.

2008

К истории проникновения идей парламентаризма на Восток // Պատմաբանասիր. հանդես.– թիվ 2, էջ 271-281:

Отклики на Парижскую Коммуну в армянской печати // Նույն տեղում, էջ 282-286:

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ

Տեղեկագիր. հասարակական գիտություններ.– Եր.– 1948-1949 (պատ. խմբ.):

Հայ ժողովրդի պատմություն. առաջին մաս.– Եր.– 1951.– 346 էջ (խմբ.):

История армянского народа.– Ер.– 1951, 291 с. (ред).

Գրիգորյան Վ.Ռ. Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800).– Եր.– 1958, 224 էջ (խմբ.):

Всемирная история. Т. 6.– М., 1959.– 830 с. (член ред. колл.).

Շոթա Ռուսթավելի. Ընծենավորը.– Եր.– 1966, 319 էջ (խմբ. կոլ. անդամ):

Դանտե Ալիգիերի. Աստվածային կատակերգություն.– Եր.– 1969, 805 էջ (խմբ. կոլ. անդամ):

Քսենոփոն. Անաբասիս.– Եր.– 1970, 283 էջ (խմբ. կոլ. անդամ):

Հեքսպիր. Քրոնիկներ. գիրք 1.– Եր.– 1972, 535 էջ (խմբ. կոլ. անդամ):

Հեքսպիր. Քրոնիկներ. գիրք 2.– Եր.– 1973, 682 էջ (խմբ. կոլ. անդամ):

Բենվենուտո Չելլինիի կյանքը.– Եր.– 1974, 491 էջ (խմբ. կոլ. անդամ):

Վասիլ Դիգենիս Ակրիտաս. Եր.– 1978, 231 էջ (խմբ. կոլ. անդամ):

Էքերման. Զրույցներ Գյոթեի հետ նրա կյանքի վերջին տարիներին 1823-1832.– Եր.– 1975, 755 էջ (խմբ. կոլ. անդամ):

Волгин В.П. Очерки истории социалистических идей. С древности до конца XVIII в.– М.–1975, 295 с. (член ред. колл.).

Волгин В.П. Очерки истории социалистических идей. Первая половина XIX в.– М.– 1976, 419 с. (член ред. колл.).

Волгин В.П. Развитие общественной мысли во Франции в XVIII веке.– М.– 1977, 375 с. (член ред. колл.).

Հիլլեր. Վալլենշտայն.– Եր.– 1977, 451 էջ (член ред. колл.).

Волгин В.П. Французский утопический коммунизм.– М.– 1979, 336 с. (член ред. колл.).

Волгин В.П. Статьи и выступления.– М.– 1979, 276 с. (член ред. колл.).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը 5-6
Ա. Ռ. Հովհաննիսյանի կյանքի, գիտական, մանկավարժական և գիտակազմակերպական գործունեության համառոտ ակնարկ.....7-23
Գրականություն Ա. Ռ. Հովհաննիսյանի կյանքի և աշխատությունների մասին 24-26
Ա. Ռ. Հովհաննիսյանի աշխատությունների ժամանակագրական ցանկ 27-33
Ա. Ռ. Հովհաննիսյանի խմբագրած գրքերի ցանկ 34

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0091211

A II 93998